ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Թիվ 110

25. սեպտեմբերի 2019 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝
Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Արմավիրի մարզի Հակավանի համայնքապետարանը Ձեզ է ներկայացնում Հայկավան համայնքի ղեկավարի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 20-ին ընդունած որոշումները՝ ուղղված հղումներով :

Առդիր՝ 3 թերթ

Համայնքի ղեկավար՝ Ռ. Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

20. սեպտեմբերի 2019թ N 12-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՄԻՆՉԵՎ 20% ԱՎԵԼ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Հայկական համայնքում քաղաքացի Սիմոն Գարուշի Մաթևոսյանին ժառանգությամբ պատկանող տնամերձ հողամասը 1992թվականի սեփականաշնորհման հանձնաժողովի թիվ 3 որոշմամբ կազմել է 1600 քմ տնամերձ հողամաս: Քարտեզագրման և գույքագրման ժամանակ տնամերձ հողամասի փաստացի մակերեսը կազմել է1899 քմ: Տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած 299 քմ հողամասը չի գտնվում Հ.Հ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, համապատասխանում է Հ.Հ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3-րդ կետերի պահանջներին չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ղեկավարվելով Հ.Հ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով, Տեղական ինքնակառավարման մասին Հ.Հ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Սիմոն Գարուշի Մաթևոսյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Օրինական տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած 299քմ հողամասը անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Սիմոն Գարուշի Մաթևոսյանին (ծածկագիր 019-017):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ռ. Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

20. սեպտեմբերի. 2019 թ N13 -Ա

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԻՄՈՆ ԳԱՐՈՒՇԻ ՄԱԹԵՈՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սիմոն Գարուշի Մաթևոսյանը ծնվ. 1966թ, դիմել է ժառանգության իրավունքով Արմավիրի մարզի Հայկավան համայնքի 13 փողոց 4 բնակելի տուն հասցեում գտնվող 1600քմ օրինական և 299քմ փաստացի ավել օգտագործվող տնամերձ հողամասի վրա կառուցված բնակելի տունը և շենք -շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով: Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 2001թվականի մայիսի 15-ը և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, բավարարում են « Համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տների» Հ.Հ. օրենքի 1-ն և 2-րդ հոդվածների պահանջները, հողամասը չի ընդգրկված Հ.Հ. հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում:

Ղեկավարվելով Հ.Հ. հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասով, Տեղական Ինքնակառավարման մասին Հ.Հ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հ.Հ. օրենքով և հիմք ընդունելով քաղաքացի Սիմոն Գարուշի Մաթևոսյանի ծնվ. 1966թ . դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Արմավիրի մարզի Հայկավան համայնքի 13 փողոց 4 բնակելի տուն հասցեում գտնվող Սիմոն Գարուշի Մաթևոսյանի ծնվ. 1966թ իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 1600քմ օրինական և 299քմ փաստացի ավել օգտագործվող տնամերձ հողամասի և նրա վրա գտնվող բնակելի տան 97.6 քմ (կառ 1980թ), ավտոտնակ 42.4 քմ (կառ 1988թ), ծածկոց 60.6 քմ (կառ 1992թ), սանհանգույց 8.0 քմ (կառ 1992թ) կաթսայատուն 2.9 քմ (կառ 1980թ), աստիճան 1.8 քմ (կառ 1980թ) նկատմամբ:
2. 299քմ հողամասը, որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի տակ տրամադրվել է անհատույց սեփականության իրավունքով:
3. Առաջարկել Հ.Հ Կ.Ա Ա.Գ.Կ Պ.Կ Արմավիրի տարածքային ստորաբաժանմանը գրանցել՝ Սիմոն Գարուշի Մաթևոսյանի ծնվ. 1966թ սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տան, շենք-շինությունների և հողամասերի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ. Ղազարյան